ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1946, № 9 *Общественные науки*

Ս. Հասլեյան

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1904—1906

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի որոշմամբ լույս է ընծայվում Ի. Վ. Ստալինի երկերի առաջին հրատարակությունը բաղկացած 16 հատորից։

1946 թ. մայիս ամսին լույս տեսավ երկերի առաջին հատորը, որը պարունակում է 1901 թվի սեպտեմբերից մինչև 1907 թվի ապրիլը եղած ժամանակաշրջանում, Թբիլիսիի ռևոլյուցիոն ընդհատակում, բոլշևիկյան անլեգալ և լեգալ թերթերում ընկեր Ստալինի հրապարակված հոդվածները, Կովկասյան Միության Կոմիտեի հրատարակությամբ լույս տեսած նրա առանձին աշխատություններն ու կոչերը։

Ուշագրավ են ընկեր Ստալինի աշխատությունները, հագեցված տեսեվոդական ռևոլյուցիոն մարքսիզմի սկզբունքայնությամբ։ Այդ աշխատություններում ընկեր Ստալինը խորաթափանց կերպով մարքս-լենինյան տեսությունը զարգացրել և հարստացրել է նոր փորձով։

Դեռ 1898 թվից գտնվելով Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի շարքերում, մարքս-լենինյան դիրքերից նա գաղափարական համար պայքար էր մղում «լեգալ մարքսիստներից», «էկոնոմիստներից», հակապրոլետարական ամեն դույնի ու երանգի օպորտունիստների դեմ, կազմակերպում էր ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական բանվորական խմբեր, գրում էր ցարական կարգերը և կապիտալիստական շահագործումը մերկացնող կոչեր, գլխավորում էր բանվորական հուժկու գործադուլներ և քաղաքական ցույցեր։

Հմտորեն տիրապետելով ռևոլյուցիոն մարքսիզմի տեսությանն ու պրակտիկային, ընկեր Ստալինը Թբիլիսիում 1898 թվին գրեց «Մարքսիստական բանվորական խմբակներում պարապմունքների ծրագիրը», որը լայն թափ հաղորդեց մարքսիստական սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարածմանը, ինքնակալության և կապիտալիզմի դեմ ուղղված քաղաքական պայքարին։

Ընկեր Ստալինը ռևոլյուցիոն-գաղափարական աշխատանքների իր առաջին իսկ քայլերից վճռական նշանակություն էր տալիս սոցիալ-դեմոկրատական տպագիր պրոպագանդային անլեգալ բանվորական մամուլին, որը պրոլետարիատի միասնական նոր տիպի մարքսիստական պարտիա ստեղծելու, բանվորական տարերային շարժման մեջ սոցիալիստական գիտակցություն մտցնելու գործում լավագույն միջոցն էր, հզոր զենքը՝ մասսաներին քաղաքական պայքարի հանելու համար։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի արշալույսին հիմնադրելով և գլխա-

վորելով Անդրկովկասի լենինյան-իսկրայական, բոլշևիկյան կազմակերպությունները, ընկեր Ստալինը «Իսկրա»-ի մարտական փորձի հիման վրա իր զինակիցներ Ա. Ծուլուկիձեի և Լ. Կեցխովելու հետ միասին, ընդհուպ ձեռնամուխ եղավ Անդրկովկասում ընդհատակյա տպարաններ և սոցիալ-դեմոկրատական մամուլ ստեղծելու գործին։

1901 թ. սեպտեմբերին Թաքվում Կեցխովելու հիմնադրած ընդհատակյա տպարանում ընկեր Ստալինի ցուցումներով տպագրվեց և լույս ընծայվեց Թբիլիսիի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության՝ Անդրկովկասում առաջին լենինյան-իսկրայական ուղղության վրացերեն «Բրձոլա» (պայքար) անլեգալ թերթը։ Այդ թերթի առաջին համարի առաջնորդողում ընկեր Ստալինը գրում էր. «... սոցիալ-դեմոկրատական կազմակերպված շարժման համար գլխավոր միջոցը ռևոլյուցիոն գաղափարների լայն պրոպագանդան և ագիտացիան»[1]։

1902 թ. հոկտեմբերին Թբիլիսիում լույս տեսավ նաև հայ սոցիալ-դեմոկրատների միության օրգան «Պրոլետարիատ»-ը։

Այս թերթերի հրատարակությունը խոշոր իրադարձություն էր Անդրկովկասի լենինյան-իսկրայական կազմակերպությունների և բանվոր դասակարգի կյանքում։ Օրեցօր աճում էր բանվորական շարժումը։ Այդ շարժման մեջ ընդգրկված Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի և աշխատավորության կենսական շահերը պահանջում էին առանց հետաձգելու ստեղծել ազգային լեզուներով բոլշևիկյան բազմատիրաժ գրականություն և կենտրոնական միացյալ օրգան։

Դեռ ՌՍԴԲՊ II համագումարի նախօրյակին, ընկեր Ստալինի նախաձեռնությամբ, 1903 թ. մարտին Թբիլիսիում տեղի ունեցավ ՌՍԴԲՊ Կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարը, որն ընտրեց Կովկասյան Միության Կոմիտե և մի քանի կարևոր հարցերի հետ մեկտեղ քննեց պարտիական կենտրոնական օրգան ստեղծելու հարցը։ Համագումարի որոշմամբ «Բրձոլա» և «Պրոլետարիատ» թերթերը միացվեցին և 1903 թվի ապրիլ-մայիս ամսից նրանց փոխարեն լույս ընծայվեց Կովկասյան Միության Կոմիտեի անլեգալ օրգան «Պրոլետարիատի կռիվ» հանդեսը, որին զուգընթաց սիստեմատիկաբար լույս ընծայվեց «Պրոլետարիատի կռվի թերթիկ»՝ իր պարբերական հավելվածներով՝ հայերեն, վրացերեն և ռուսերեն լեզուներով։ Ընկեր Ստալինը այս թերթերի հոգին էր, նրա գրչին են պատկանում առաջնորդող բոլոր հոդվածները։

Կովկասյան Միության Կոմիտեի անլեգալ թերթերը և հրատարակությունները, որոնք լույս էին տեսնում 1903 -1905 թ.թ. ժամանակաշրջանում, տպագրվում էին մեծ մասամբ Հավլաբարի ընդհատակյա տպարանում, խմբագրվում էին ընկեր Ստալինի և նրա զինակիցներ Ա. Ծուլուկիձեի և Ստեփան Շահումյանի կողմից։

Ընկեր Ստալինի երկերի առաջին հատորի մեջ մտած աշխատությունների մի մասը տպագրվել է վրացերեն անլեգալ «Բրձոլա»-ի, հայերեն, ռուսերեն և վրացերեն լեզուներով լույս տեսնող «Պրոլետարիատի կռիվ» անլեգալ հանգեսի էջերում, առանց ստորագրության։

---

[1] И. В. Сталин. Сочинения, т. I, էջ 4։

Աշխատությունների մնացած մասը լույս է տեսել 1906 – 1907 թ.թ. Թբիլիսիում հրատարակվող բոլշևիկյան „Кавказский рабочий листок", «Դանտիադի» («Լուսաբաց»), «Ախալի ցխովրեբա» («Նոր կյանք»), «Ախալի դրոեբա» («Նոր ժամանակ»), «Էլվա» («Կայծակ») լեզալ թերթերում, «Կոբա», «Կո...», «Ի. Բեսոշվիլի» ստորագրություններով։

Այս աշխատությունները հանգամանորեն լուսաբանում են պատմական այն ժամանակաշրջանը, երբ Լենինի և Ստալինի ղեկավարությամբ դրվում էին նոր տիպի ռևոլյուցիոն մարքսիստական-բոլշևիկյան պարտիայի գաղափարական և կազմակերպական հիմքերը։

«Ընկեր Ստալինի յուրաքանչյուր աշխատություն լույս էր տեսնում ռևոլյուցիոն պրակտիկայի տյս կամ այն հարցերի կապակցությամբ և պատասխան էր տալիս այդ հարցերին։ Ընկեր Ստալինի աշխատությունները մեզ ցույց են տալիս, թե ինչպես ռևոլյուցիոն ստեղծագործական միտքը մշտապես արթուն մնալով, զգայուն կերպով ուղղորդում է գործնական շարժմանը, լույս սփռելով նրա յուրաքանչյուր քայլի վրա, այդ շարժման մեջ մտցնելով տեսական, գիտական իմացության ուժը։[1]

* * *

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների հայերեն հրատարակությունն ունի մոտ կես դարի պատմություն։ Նրա առաջին նախաձեռնողները և հովանավորողները եղել են ընկեր Լենինը և Ստալինը իրենց զինակիցներ Ստեփան Շահումյանի և Սուրեն Սպանդարյանի հետ միասին։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի արշալույսին Անդրկովկասում ազգային լեզուներով մարքսիստական գրականություն ստեղծելու և պրոպագանդա կազմակերպելու հոգսը խիստ զբաղեցնում էր ընկեր Ստալինին։ Նա անձամբ նյութական միջոցներ էր գտնում, առաջավոր բանվորների միջոցով հիմնում էր ընդհատակյա տպարաններ, պայմաններ էր ստեղծում աշխատավորության մեջ լենինյան իսկրայական գաղափարների տարածման համար։ Այդ կարգով Անդրկովկասում հայերեն լեզվով լույս տեսան մարքսիզմի կլասիկների առանձին աշխատությունները։ Կովկասյան Միության Կոմիտեի շատ հրատարակություններ, որոնք կոփեցին հայ բանվորներին, նրանց համախմբեցին բոլշևիկյան պարտիայի շուրջը, դիմակազերծ արին բուրժուա-նացիոնալիստական պարտիաների կեղծ, հակապրոլետարական քաղաքականությունը։ Այդ գործում բացառիկ դեր են խաղացել ընկեր Ստալինի աշխատությունների հայերեն թարգմանության առաջին հրատարակությունները 1904—1906 թվականներին։

Ընկեր Ստալինի երկերի առաջին հատորի մեջ մտած աշխատություններից հայերեն լեզվով առաջին անգամ լույս է տեսել «Ինչպես է հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը» հոդվածը, որը տպագրված է («Պրոլետարիատի կռիվ» հանդեսի 1904 թ. սեպտեմբերի 1 (14)-ի № 4-ում)։

Ընկեր Ստալինը իր այս աշխատությունն ուղղել էր վրացական և հայկական սոցիալ-ֆեդերալիստների դեմ՝ պաշտպանելով սոցիալ-դեմոկրատիայի միասնական կենտրոնացված պարտիայի անհրաժեշտությունը, ազ-

[1] Газета „Культура и жизнь", № 1, 1946 г.

գային հարցի մարքս-լենինյան տեսությունը, որը բազմազգ Անդրկովկասի պայմաններում, բանվորական շարժման և ռուսական ռևոլյուցիայի արշալույսին, առանձին նշանակություն էր ստացել։

Նա խիստ քննադատության ենթարկեց վրացական բուրժուա-ազգայնական նացիոնալիստական ժընեյան մի խումբ ինտելիգենտներից 1904 թ. կազմակերպված սոցիալ-ֆեդերալիստների պարտիան և նրանց «Սաքարթվելո» (Վրաստան) թերթը, ինչպես նաև «Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը»—սպիցիֆիկներին, որոնք 1904 թվականին հրատարակած մանիֆեստում իրենց անվանում էին հայ բանվորների միակ պաշտպանը։ Ընկեր Ստալինը բացահայտեց նրանց քաղաքականության ֆալսիֆիկացիան պրոլետարիատի և աշխատավորության ազատագրման գործում։ Իր աշխատության մեջ այդ մասին ընկեր Ստալինը գրում էր. «Մանիֆեստ»-ի հեղինակները մոռացել են, որ մեր պարտիայի կովկասյան կոմիտեները ահա մի քանի տարի է համարվում են հայկական (և ուրիշ) պրոլետարների ներկայացուցիչները Կովկասում, որ նրանք այդ պրոլետարների մեջ զարգացնում են դասակարգային ինքնագիտակցությունը՝ հայերեն լեզվով բանավոր ու տպագիր պրոպագանդայի ու ագիտացիայի միջոցով, պայքարի ժամանակ ղեկավարում են նրանց և այլն, մինչդեռ «Հայ բանվորների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը» ծնվել է միայն երեկ չէ մյուս օրը։ Այդ ամենը նրանք մոռացել են և պետք է հուսալ, էլի շատ բան կմոռանան, միայն թե հշտությամբ ընդօրինակեն Բունդի կազմակերպական ու քաղաքական հայացքները»։[1]

Ընկեր Ստալինը մերկացրեց բուրժուազիայի այդ սպասարկուներին, որոնք ջանում էին մթագնել բանվորների միտքը, քայքայել Անդրկովկասի և Ռուսաստանի պրոլետարիատի դասակարգային ինտերնացիոնալ միասնությունը, սոցիալ-դեմոկրատական պարտիան, մասնատել ըստ ազգությունների, նրանց մեջ կանգնեցնել ազգային միջնորմներ, դրանով իսկ պաշտպանել ռուսական ռեակցիայի շահերը, կիրառել ինքնակալության քաղաքականությունը, խափանել ռևոլյուցիան։

Ընկեր Ստալինը իր աշխատության երկրորդ մասում հանգամանորեն մեկնաբանելով բոլշևիկյան պարտիայի ազգային հարցի ծրագիրը, խորտակիչ հարվածներ հասցրեց սոցիալ-ֆեդերալիստներին, որոնք «Սաքարթվելո»-ի էջերում սպեկուլյացիայի ենթարկելով ազգային հարցը, կոկորդիլոսյան արցունքներ էին թափում վրացական բանվորների համար։ «... Բայց իզուր,—գրում էր ընկեր Ստալինը։—Բուրժուական հրապարակախոսների քաղցր-մեղցր հեքիաթները չկարողացան քնեցնել վրացական պրոլետարիատին։ Վրացական մարքսիստների անխնա գրոհները, մանավանդ դասակարգային հուժկու ելույթները, որոնք ռուս, հայ, վրացի և մյուս պրոլետարներին դարձրին մեկ սոցիալիստական ջոկատ—խորտակիչ հարված հասցրին մեր բուրժուական նացիոնալիստներին և վտարեցին նրանց պայքարի դաշտից»։[2]

Եվ ապա անդրադառնալով ՌՍԴԲ Պարտիայի ազգային հարցի դասակարգային էությանը, ազգային հարցի լուծումը կապելով պատմական

[1] И. В. Сталин, Соч., т. I, էջ 40։
[2] И. В. Сталин, Соч., т. I, էջ 34։

կոնկրետ իրագրության հետ, համառուսաստանյան պրոլետարիատի շահերի, սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակների հետ, ընկեր Ստալինը գրում էր. «... Պարզ է, որ ազգային միջնորմների կործանումը և ռուսական, վրացական, հայկական, լեհական, հրեական և մյուս պրոլետարների սերտ համախմբումը հանդիսանում է ռուսական պրոլետարիատի հաղթանակի անհրաժեշտ պայմանը. Սրանք են Ռուսաստանի պրոլետարիատի շահերը»[1] «Ազգային հարց»-ի այսպես կոչված «վերջնական» լուծումը, այսինքն Ռուսաստանի «օտար» ազգությունների «ազատագրումը», ընդհանրապես ասած, անհնարին է մինչ այն ժամանակ, քանի դեռ քաղաքական տիրապետությունը գտնվում է բուրժուազիայի ձեռքին»[2]

Ընկեր Ստալինի այս հոդվածը ազգային հարցի մարքսիստական թեորիայի մշակման կարևոր էտապը հանդիսացավ մեր պարտիայի պատմության մեջ. Ընկեր Ստալինը հանգես եկավ իբրև ազգային հարցի խոշոր մասնագետ. Այդ հոդվածում արծարծված իդեաները նա զարգացրեց 1913 թ. լույս տեսած «Մարքսիզմը և ազգային հարցը» ծրագրային իր աշխատության մեջ, որը բարձր գնահատության արժանացավ Լենինի և ամբողջ պարտիայի կողմից.

Ընկեր Ստալինի «Ինչպես է հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը» աշխատությունը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների կյանքում տեսական և գործնական բացառիկ նշանակություն ունեցավ վրացական և հայկական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարում

Այնուհետև հայերեն լեզվով լույս տեսան, պարտիայի կազմակերպական լենինյան պլանի դաղափարական հիմունքների և կազմակերպական սկզբունքների պաշտպանությանը նվիրված, ընկեր Ստալինի «Պրոլետարների դասակարգը և պրոլետարների պարտիան» հոդվածը («Պրոլետարիատի կռիվ» № 5, 1 (14) հունվարի 1905 թ.), «Համառոտակի պարտիական տարաձայնությունների մասին» բրոշյուրը, որը Կովկասյան Միության Կոմիտեի անլեգալ հրատարակությամբ լույս տեսավ 1905 թ. ամառը, և «Պատասխան սոցիալ-դեմոկրատին» հոդվածը («Պրոլետարիատի կռիվ» № 8, 15 օգոստոսի 1905 թ.).

«Պրոլետարների դասակարգը և պրոլետարների պարտիան» հոդվածի մեջ զարգացնելով Լենինի «Մի քայլ առաջ, երկու քայլ ետ» աշխատության սկզբունքները, ընկեր Ստալինը ջախջախեց մենշևիկյան հակառևոլուցիոն մանր-բուրժուական օպորտունիզմը կազմակերպական հարցերում, գիտական և քաղաքական խոր անալիզով հիմնավորեց բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի, բոլշևիկյան պարտիայի կազմակերպական սկզբունքները միաձույլ, ձևակերպված, մարտական պարտիա ստեղծելու ասպարեզում, պարտիա, որը պատրաստվում էր հասունացող ռևոլուցիայի մեջ պրոլետարիատին և աշխատավորությանը վճռական գոտեմարտի առաջնորդելու ընդդեմ ցարիզմի և բուրժուազիայի. Ընկեր Ստալինը բացահայտելով մենշևիկների կազմալուծիչ, հակապրոլետարական դիծը, ամենաեռանդուն կերպով պաշտպանեց պարտիայի շարքերի մաքրության սկզբունքը, սոցիալ-դեմոկրատիայի կանոնադրության առաջին կետի լենինյան բնորոշումը:

[1] И. В. Сталин, Соч., т. I, էջ 26.
[2] И. В. Сталин, Соч., т. I, էջ 49.

«... Մեր պարտիան, գրում էր ընկեր Ստալինը,— մի ամբոց է, որի դռները բացվում են միայն ստուգվածների համար»[1] «... Մենք թերամտության արդյունք ենք համարում պարտիական երկրորդ համագումարի որոշումը, որը (համագումարը) ընդունեց Մարտովի սահմանումը, և հույս ենք հայտնում, որ պարտիայի երրորդ համագումարը, անտարակույս, կուղղի երկրորդի սխալը և կընդունի ընկեր Լենինի սահմանումը»[2]

Հատկապես լայն տարածում ստացավ և մենշևիկյան բանակում կրքեր բորբոքեց ընկեր Ստալինի «Համառոտակի պարտիական տարաձայնությունների մասին» բրոշյուրը, որով նա, ներպարտիական ուժեղ պայքարի օրերին, հանդես եկավ Վ. Ի. Լենինի «Ի՞նչ անել» աշխատության դրույթների պաշտպանությամբ, ոչնչացնող քննադատության ենթարկեց «էկոնոմիստներին» և մենշևիկների տարերայնության օպորտունիստական տեսությունը, հիմնավորեց և գարգացրեց մարքս-լենինյան ուսմունքը բանվորական շարժման զարգացման ասպարեզում, ռևոլուցիոն տեսության և քաղաքական պարտիայի նշանակությունը բանվոր դասակարգի համար։

Բանվոր դասակարգը, քանի նա բանվոր դասակարգ է մնում, իր սեփական ուժերով չի կարող մշակել դիտական սոցիալիզմը, դրա համար նա ժամանակ և հնարավորություն չունի, սոցիալիստական դիտակցությունը բանվորական շարժման մեջ պետք է մտցվի դրսից և այդ պետք է անի պրոլետարիատի քաղաքական պարտիան, բանվոր դասակարգի ավանգարդ սոցիալ-դեմոկրատիան, որն իր գործունեության մեջ պետք է մարմնավորի ռևոլուցիոն տեսության և պրակտիկայի միասնությունը։ Բանվոր դասակարգի շահերի տեսակետից կենսական անհրաժեշտություն է սոցիալիստական գիտակցություն մտցնել բանվորական շարժման մեջ, սոցիալ-դեմոկրատիան դրանով պետք է պաշտպանի տարերային շարժումը բուրժուական ազդեցությունից, իմաստավորի, ուղղություն և ձև տա բանվորական տարերային շարժմանը. դա կարագացնի բանվոր դասակարգի աճատագրումը, սոցիալիզմի հաղթանակը։

«Ի՞նչ բան է գիտական սոցիալիզմը առանց բանվորական շարժման,— գրում է ընկեր Ստալինը։— Դա մի կողմնացույց է, որը մնալով առանց գործադրության, կարող է միայն ժանգոտել, և այն ժամանակ հարկ կլինի դեն նետել։

Ի՞նչ է հապա բանվորական շարժումը առանց սոցիալիզմի։— Առանց կողմնացույցի մի նավ, որը վերջ ի վերջո, առանց այն էլ մյուս ափին կհասնի, բայց դրա համար ավելի շատ ժամանակ կպահանջի, ավելի շատ խոչընդոտների կհանդիպի։

... Միացրեք բանվորական շարժումը սոցիալիզմի հետ և դուք կստանաք սոցիալ-դեմոկրատական մի շարժում, որ ամենակարճ ճանապարհով դեպի «ավետյաց երկիր կձգտի»[3]

Մենշևիկները, Ժորդանիայի գլխավորությամբ, վայնասուն բարձրացրին իրենց «Սոցիալ-դեմոկրատ» թերթում այդ աշխատության դեմ։ Ընկեր Ստալինը «Պրոլետարիատի կռիվ» ժուռնալում հանդես եկավ «Պատասխան

[1] И. В. Сталин, Соч., т. I. էջ 67.
[2] И. В. Сталин, Соч., т. I. էջ 78.
[3] И. В. Сталин, Соч., т. I. էջ 102—103.

սոցիալ-դեմոկրատին» հայտնի հոդվածով, հիմնավորեց իր տեսակետները և մերկացրեց մենշևիկների մի շարք կեղտոտ դեմագոգիաները։ Վ. Ի. Լենինը արտասահմանից մեծ հետաքրքրությամբ հետևում էր ընկեր Ստալինի գլխավորած անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքներին և ներպարտիական պայքարին։ Իր նամակներում նա գոհունակությամբ արձանագրում էր Կովկասյան Միության Կոմիտեի հրատարակչական գործունեության հաջողությունները, Կովկասում պարտիական աշխատանքների վերականգնումը։ Հատկապես մեծ հիացմունք պատճառեց նրան ընկեր Ստալինի «Պատասխան սոցիալ-դեմոկրատին» հոդվածը՝ ուղղված կովկասյան մենշևիկների դեմ։ Լենինը բոլշևիկյան կենտրոնական օրգան „Пролетарий" թերթի 1905 թ. № 22-ում այդ առթիվ մի գրախոսական գետեղեց, մանրամասն վերլուծման ենթարկեց ընկեր Ստալինի հոդվածը և շատ բարձր գնահատականի արժանացրեց այն։ «Պատասխան սոցիալ-դեմոկրատին» հոդվածի մեջ,—գրում է Վ. Ի. Լենինը,—մենք կնշենք «դրսից գիտակցություն մտցնելու» հռչակավոր հարցի հիանալի գրվածքը»։[1]

Այս աշխատությունների մեջ զարգացնելով լենինյան դրույթները, ընկեր Ստալինն անգնահատելի ներդրում կատարեց բոլշևիկյան պարտիայի գաղափարական-կազմակերպական հիմնավորման գործում։

Ընկեր Ստալինը 1905—1907 թ.թ. Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների դեկի մոտ գտնվելով, իր աշխատություններում «պաշտպանում, հիմնավորում և պրոպագանդա է անում ռևոլուցիայի լենինյան թեորիան, պրոլետարիատի ու գյուղացիության դեմոկրատական դիկտատուրայի բոլշևիկյան ստրատեգիական լոզունգը, բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիան սոցիալիստականի վերաճելու գաղափարը և պրոլետարիատի տակտիկական խնդիրները»։[2]

Ընկեր Ստալինի այդ աշխատությունների թվին են պատկանում 1905 թ. ընթացքում վրացերենից միաժամանակ հայերենի թարգմանված և հրապարակված «Կովկասի բանվորներ, ժամանակն է վրեժ լուծելու», «Կեցցե՛ միջազգային եղբայրությունը», «Բաղաքացիներ, կեցցե՛ կարմիր բոշը» կոչերը, «Զինված ապստամբությունը և մեր տակտիկան» («Պրոլետարիատի կռիվ» հանդես № 7, 1905 թ. հուլիսի 15), «Ժամանակավոր ռևոլուցիոն կառավարությունը և սոցիալ-դեմոկրատիան» (հայերեն լեզվով տպագրված է միայն առաջին մասը՝ «Պրոլետարիատի կռիվ» № 8, 1905 թ. օգոստոսի 19), «Ռեակցիան ուժեղանում է» («Պրոլետարիատի կռիվ» № 9, 1905 թ. սեպտեմբերի 19), «Բուրժուազիան թակարդ է դնում» («Պրոլետարիատի կռիվ» № 9, 1905 թ. սեպտեմբերի 15) հոդվածները և «Երկու տակտիկա» բրոշյուրը։

Լենինի հետ միասին ընկեր Ստալինը ջախջախիչ հարվածներ հասցրեց Անդրկովկասի մենշևիկներին։ Գլխավորելով մասսաների ռևոլուցիոն հարաճուն շարժումը, բոլշևիկներն ամենուրեք պատրաստվում էին զինված ապստամբության։

Ցարական իշխանությունը եռանդուն կերպով միջոցներ էր փնտրում

[1] „Пролетарская революция" ժուռնալ № 4, 1934 թ., էջ 95—96։

[2] Լ. Բերիա—«Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը», Պեհրաս, 1945 թ., էջ 118։

կանխելու ռևոլուցիան, կազմալուծելու նրա ուժերը, մասսաներին չեղելու ռևոլուցիայից, որը հակակել էր պրոլետարիատին և գյուղացիությանը, ճնշված ժողովուրդների լայն զանգվածներին։ Այդ նպատակով ցարական իշխանությունը 1905 թ. փետրվար ամսից հայ-թուրքական եղբայրասպան կոտորածներ հրահրեց Անդրկովկասի մի շարք վայրերում, անսահման վիշտ ու տառապանքներ պատճառեց հայ և թուրք աշխատավորությանը։ Ահա այդ ժամանակ օրերին էր, որ լույս տեսան Թիֆլիսի Կոմիտեի հրատարակությամբ ընկեր Ստալինի գրած «Կեցցե՛ միջազգային եղբայրությունը» և «Քաղաքացիներ, կեցցե՛ կարմիր դրոշը» բոլշևիկյան կոչերը, որոնց մեջ ընկեր Ստալինը իրեն հատուկ ռևոլուցիոն կրքով մերկացնում էր ցարական իշխանությանը իբրև Բաքվի և մյուս վայրերի հայ-թուրքական կոտորածների հեղինակի։ Նա կոչ էր անում պրոլետարիատին և աշխատավորությանը զգոն լինել, չենթարկվել ցարական պրովոկացիային, այդ բարդ իրադրության մեջ կոփում էր ժողովուրդների եղբայրությունը, կոչ էր անում միասնաբար պայքարի դուրս գալ աղատության ոխերիմ թշնամի ցարիզմի դեմ։

Գլխավորելով մասսաների ցասումը, բոլշևիկները փետրվարի 13-ից մինչև 15-ը Թբիլիսիում անցկացրին հայ, թուրք, ռուս, վրացի աշխատավորության հակակառավարական հուժկու ցույցեր։ Այդ ցույցերին մասնակցում էին Թբիլիսիի ավելի քան 20 հազար բանվորներ ու աշխատավորներ։ Ցուցարարների մեջ տարածվեցին ընկեր Ստալինի գրած կոչերը 12 հազար օրինակով, որոնք կանխեցին ցարական իշխանության նախապատրաստած եղբայրասպան կոտորածները Թբիլիսիում։ Փետրվարի 13-ին հայերեն, ռուսերեն և վրացերեն լեզուներով բաց թողնված «Կեցցե՛ միջազգային եղբայրությունը» կոչի մեջ ընկեր Ստալի՛նը գրում էր. «Խղճուկ ցարի այդ խղճուկ ստրուկները այժմ փորձում են եղբայրասպան պատերազմ առաջ բերել և մեզ մոտ՝ Թիֆլիսում... Դուք, հայեր, թուրքեր, վրացիներ, ռուսներ, իրար ձեռք մեկնեցեք, ավելի սերտորեն համախմբվեցեք և կառավարության՝ ձեզ իրարից անջատելու փորձերին միաձայն դուչեցեք. «Կորչի ցարական կառավարությունը, կեցցե՛ ժողովուրդների եղբայրությունը»։[1]

Փետրվարի 15-ին բաց թողնվեց ընկեր Ստալինի գրած երկրորդ կոչը՝ «Քաղաքացիներ, կեցցե՛ կարմիր դրոշը», որի մեջ խորացնելով ժողովուրդների եղբայրության գաղափարը, ընկեր Ստալինը հիմնավորում էր բոլշևիկյան պարտիայի ազգային քաղաքականության հիմունքները, մասսաներին կոչ անում համախմբվել սոցիալ-դեմոկրատիայի շուրջը՝ ցարական իշխանությունը տապալելու համար։ «Դուք ցանկանում եք ոչնչացնել ազգային ամեն մի թշնամանք, դուք ձգտում եք ժողովուրդների լրիվ հավասարության։ Բայց իմացեք, քաղաքացիներ, որ միայն անհավասարության ոչնչացումով, միայն կապիտալիզմի վերացումով կոչնչացվի ազգային ամեն մի երկպառակություն։

Սոցիալիզմի հաղթանակ՝ ահա թե ինչի պետք է դուք ձգտեք վերջի-վերջո։

Բայց ո՞վ կջնջի երկրի երեսից ցարիզմի գազրելի կարգերը, ով ձեզ

[1] И. В. Сталин, Соч., т. I, էջ 82.

կազատի ջարդերից.—Պրոլետարիատը՝ սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարությամբ։

Իսկ ով կխորտակի կապիտալիստական կարգերը, ով կհաստատի երկրում միջազգային համերաշխություն։—Նույն պրոլետարիատը, նույն սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարությամբ։

Պրոլետարիատը և միայն պրոլետարիատը—ահա թե ով կնվաճի ձեզ համար ազատություն և խաղաղություն»։[1]

Ռևոլյուցիայի ալիքը բարձրանում էր։ Ցարական իշխանությունը դիմեց ռևոլյուցիոն ուժերի պառակտման մի ուրիշ միջոցի։ 1905 թ. օգոստոսի 6-ին նա դեկլարացիա հրատարակեց դումա հրավիրելու մասին։ Անդրկովկասի մենշևիկները, որոնք 1905 թ. ապրիլի 14-ին իրենց առաջին կոնֆերանսում մերժել էին ռևոլյուցիոն կառավարության լոզունգը և դրել էին Պետական դումա ստեղծելու խնդիրը, 1905 թ. օգոստոսին իրենց երկրորդ կոնֆերանսում՝ հրճվանքով դիմավորեցին ցարական դեկլարացիան, որոշում ընդունեցին աջակցելու և մասնակցելու Բուլիգինյան դումային։ Վճռականապես մերժելով զինված ապստամբությունը, նրանք իրենց գործունեությամբ ամեն կերպ աշխատեցին խանգարել ու խափանել ռևոլյուցիոն մասսաների ելույթները։ Նրանք գնացին լիբերալ բուրժուազիայի հետևից, որը պրոլետարիատի ղեկավարությամբ բարձրացող ռևոլյուցիայից վախեցած, գործարք էր փնտրում ցարական իշխանության մոտ՝ ընդդեմ ռևոլյուցիայի։

Ընկեր Ստալինը ռուսական ռևոլյուցիայի առաջին իսկ քայլերից մերկացնելով մենշևիկներին և լիբերալ բուրժուազիային, վճռականորեն պաշտպանում և կենսագործում էր ռևոլյուցիայի լենինյան ստրատեգիան ու տակտիկան։ Այս հարցերին նվիրած իր աշխատություններում հիմնավորում, զարգացնում և պրոպագանդա էր անում երրորդ համագումարի որոշումները, Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական ռևոլյուցիայի մեջ» հանճարեղ աշխատության դրույթները։ Ընկեր Ստալինը 1905 թ. հունվարին գրած «Կովկասի բանվորներ, ժամանակն է վրեժ լուծելու» կոչի մեջ, իր խոսքերն ուղղելով լիբերալներին, ասում էր. «Այո, պարոններ, զուր են ձեր ջանքերը։ Ռուսական ռևոլյուցիան անխուսափելի է։ Նա անխուսափելի է այնպես, ինչպես անխուսափելի է արևի ծագումը։ Կարող եք արդյոք կանգնեցնել ծագող արևը։ Այդ ռևոլյուցիայի գլխավոր ուժն է քաղաքի և գյուղի պրոլետարիատը, իսկ նրա դրոշակակիրն է սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիան, և ոչ թե դուք, պարոնայք լիբերալներ»։ Եվ ապա դիմելով բանվորներին, ասում էր. «Առաջ, ուրեմն, ընկերներ։ Երբ ցարական ինքնակալությունը երերվում է, մեր պարտականությունն է վճռական գրոհի պատրաստվել։ Ժամանակն է վրեժ լուծելու»։[2]

Անդրկովկասի մենշևիկները մեծ բերկրանքով դիմավորեցին 1905 թ. հոկտեմբերի 20-ի ցարական մանիֆեստը։ Նրանք խնդիր էին դնում զինաթափվել, կոնստիտուցիոն պայքար կազմակերպել հանուն ռեֆորմների «Մենք զենք չենք ուզում, կորչի զենքը» լոզունգ առաջադրելով բանվոր դասակարգին։ Այդ նույն ժամանակ Անդրկովկասի բոլշևիկները իրենց 4-րդ

[1] И. В. Сталин, Соч., т. 1, էջ 87։

[2] И. В. Сталин, Соч., т. I, էջ 78, 80։

կոնֆերենցիայի որոշման համաձայն ամենուրեք զինված դրուժիններ էին կազմակերպում, զենք էին ձեռք բերում, հրահանգիչներ էին պատրաստում ապստամբության տեխնիկան յուրացնելու, ապստամբական գործողությունները ղեկավարելու համար։ Անդրադառնալով այդ հարցերին, ընկեր Ստալինը «Զինված ապստամբությունը և մեր տակտիկան» իր հոդվածում («Պրոլետարիատի կոիվ» № 7, 15 հուլիսի 1905 թ.), ի հակակշիռ մենշևիկների, մատնացույց էր անում, որ ագիտացիայի և պրոպագանդայի աշխատանքը տասնապատկելով մեկտեղ, ընթացիկ մոմենտի ամենաանհետաձգելի պահանջն է զինված ապստամբություն կազմակերպելու և ղեկավարելու կոնկրետ գործը։ «Համաուսատանյան ապստամբության հենց տեխնիկական ղեկավարությունը և կազմակերպական նախապատրաստումը կազմում են այն նոր խնդիրը, որ կյանքը դրել է պրոլետարիատի առաջ»։

«... Ոչ թե Մարտովի թղթե տնակը, դրում էր ընկեր Ստալինը «Ռևակցիան ուժեղանում է» իր հոդվածում («Պրոլետարիատի կոիվ» № 9, 15 սեպտեմբերի 1905 թ.), այլ ընդհանուր ապստամբություն — ահա թե ինչ է պետք մեզ։ Ժողովրդի փրկությունը ժողովրդի հաղթական ապստամբության մեջ է»։

Ընկեր Ստալինը իր «Ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարությունը և սոցիալ-դեմոկրատիան» («Պրոլետարիատի կոիվ» № 8, 9 օգոստոսի 1905 թ.) հոդվածում պաշտպանելով ՌՍԴԻՊ 3-րդ համագումարի տակտիկական լենինյան գիծը, զարգացրեց կարևոր դրույթներ, որոնց մեջ մերկացնելով մենշևիկներին, մատնացույց էր անում, որ պրոլետարիատի ղեկավարությամբ ժողովրդական հաղթական զինված ապստամբությունը տապալելով ցարական ինքնակալությունը, պետք է ստեղծի ժամանակավոր կառավարություն — բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն դեմոկրատական դիկտատուրա։ Ռևոլյուցիան մինչև վերջ հասցնելու համար անհրաժեշտ է, որ սոցիալ-դեմոկրատիան մտնի ժամանակավոր կառավարությունը։ Նա պետք է, որքան կարելի է խոր, դեմոկրատական վերափոխումներ կատարի, իրականացնի սոցիալ-դեմոկրատիայի մինիմում-ծրագիրը, առանց սպասելու սահմանադիր ժողովի։

«Ռևոլյուցիան կկատարի ժողովուրդը,— ասում էր ընկեր Ստալինը,— իսկ ժողովուրդը դա պրոլետարիատն ու գյուղացիությունն է։ Պարզ է, որ նրանք էլ պետք է վերցնեն իրենց վրա ռևոլյուցիան մինչև վերջ տանելու, ժողովրդին զինելու, ռեակցիան սանձահարելու գործը և այլն։ Այս բոլորի համար անհրաժեշտ է, որպեսզի պրոլետարիատն ու գյուղացիությունը ժամանակավոր կառավարության մեջ ունենան իրենց շահերի պաշտպանները։ Պրոլետարիատն ու գյուղացիությունը կիշխեն փողոցում, նրանք կթափեն իրենց արյունը,— պարզ է, որ նրանք էլ պետք է իշխեն ժամանակավոր կառավարության մեջ»։

Դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո, 1906 թ. հունվարին Կովկասյան Միության Կոմիտեի անլեգալ հրատարակությամբ լույս տեսավ ընկեր Ստալինի վրացերենից հայերենի թարգման-

[1] И. В. Сталин, Соч., т. I, էջ 133։
[2] И. В. Сталин, Соч., т. I, էջ 178։
[3] И. В. Сталин, Соч., т. I, էջ 139։

ված «Երկու գոտեմարտ» բրոշյուրը, որի մեջ բացահայտելով մենշևիկների դավաճանական գիծը, ընկեր Ստալինն ասում էր, որ 1905 թ. հունվարի 9-ից մինչև դեկտեմբերյան զինված ապստամբությունը պրոլետարիատը մարտական մեծ ճանապարհ է անցել, քաղաքականապես անչափ աճել է, և որ զինված ապստամբությունը հաղթության միակ ուղին է, 1905 թ. դեկտեմբերին Տամմերֆորսի բոլշևիկյան առաջին կոնֆերենցիայի որոշումների ոգով շարադրելով իր մաքերը, ընկեր Ստալինը գրում էր. «Մի խոսքով՝ համախմբված պարտիա, պարտիայի կողմից կազմակերպված զինված ապստամբություն և հարձակման քաղաքականություն—ահա թե ինչ է պետք մեզ այսօր ապստամբության հաղթանակի համար։

... Ո՛չ, ընկերներ, Ռուսաստանի պրոլետարիատը ջախջախված չէ, նա միայն նահանջել է և այժմ նոր, փառավոր մարտերի է պատրաստվում։ Ռուսաստանի պրոլետարիատը վայր չի դնի արյամբ ներկված դրոշը, նա ոչ ոքի չի դիջի ապստամբության ղեկավարությունը, նա ռուսական ռևոլուցիայի միակ առաջնորդը կլինի»։[1]

* * *

Ռուսական ռևոլուցիայի տարիներին, ցարական կարգերի դաժան պայմաններում, ընկեր Ստալինի աշխատությունների հայերեն թարգմանությունները, որոնք տասնյակ հազարավոր օրինակներով տարածվում էին հայ բանվորների, գյուղացիների մեջ, թափանցում էին երկրի ամենախուլ անկյունները, բացառիկ դեր կատարեցին հայ ժողովրդի կյանքում, լուսավորեցին հայ աշխատավորության պայքարի ուղին, բազմահազար հայ բանվորների ու գյուղացիների՝ առաջ, վրացի և ադրբեջանական բանվորների հետ միասին՝ համախմբեցին բոլշևիկյան պարտիայի լոզունգների շուրջը, կյանքի ու մահվան կռվի դուրս բերին ատելի ցարի և կապիտալիզմի դեմ։

Ընկեր Ստալինի աշխատությունները ճշմարտացիորեն բացահայտեցին բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հակապրոլետարական էությունը, ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակեցին և կոփեցին բանվոր դասակարգի գործի համար մարտնչող անձնուրաց շատ հայ բոլշևիկների։

[1] И. В. Сталин, Соч., т. I, էջ 203, 205.